4269

(բ) Կ-ի ԿՈՒԼՏ. ՊՐՈՊ. ԲԱԺԻՆ

ԾՐԱԳԻՐԸ
*1931|32 ուսումնական տարվա խորհ. կուսդպրոցների յով. կուս. լուսավորության ցանցի միջին օղակների համար:*

# ԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ЗКП
Ա-23

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

1 1 JUL 2005
1 DEC 2009

ՀԱՄ. Կ. (բ) Կ.-ի ԿՈՒԼՏ. ՊՐՈՊ. ԲԱԺԻՆ

ԾՐԱԳՐԵՐ

1931/32 ուսումնական տարվա խորհ. կուսդպրոցների յեվ կուս. լուսավորության ցանցի միջին օղակների համար։

# ԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Թարգմ. ՅԵ. ՍԻՄՈՆՅԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

31.01.2013

4269

Գենհրատի տպարան
Գլավլիտ 6978 (բ)
Հրատար. № 1917
Պատվեր 5990
Տիրաժ 1000

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна
61376-67

Ներկա ծրագիրն ազգային կոմկուսակցությունների պատմության ծրագրի առաջին փորձն է: Նկատի ունենալով այն դժվարությունները, որ կապված են այս ծրագրի կազմելու աշխատանքի հետ, Կենտկոմի կուլտպրոպ բաժինը խնդրում է ազգային կոմկուսների պատմությունը մշակող ընկերներին, ինչպես նաև նրանց, վորոնք աշխատելու յեն այս ծրագրի վրա, ուղարկեն կուլտպրոպբաժնին իրենց դիտողությունները վերջինիս նկատմամբ, վորպեսզի նրա վերամշակման կամ վերահրատարակման դեպքում այդ դիտողությունները հաշվի առնվեն:

ՀԱՄ. Կ. (բ Կ Կ. Կ.–ի Կուլտ. պրոպ. բաժին.

## ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Ազգային կոմկուսների պատմությունը «ամենայերիտասարդ» ուսումնական դիսցիպլինան է: 1931—32 ուս. տարվանից ազգային կոմկուսների պատմությունն առաջին անգամը, վորպես ՀամԿ(բ)Կ պատմության հիմնական դասընթացի մի լրացուցիչ մասը, մտցվում է կուսուսուցման ցանցը, այն է՝ խորհրդային, կուսակցական դպրոցների ուսման պլանների մեջ: Հենց մեր այս ծրագիրն էլ հանդիսանում է առաջին փորձն ազգային կոմկուսների պատմության ծրագիր կազմելու ասպարեզում:

Ազգային կոմկուսակցությունները ՀամԿ(բ)Կ–ի մի մասն են կազմում, սակայն այնպիսի մի մասը, վորն ունի իր առանձնահատկությունները, իր զարգացման առանձին ու ինքնատիպ ուղիները, իր սեփական պատմությունը — այդպիսին է ներկա ծրագրի հիմնական դիրքավորումը:

Ամբողջ ծրագրի միջով կարմիր թելի նման անցնում են յերկու գաղափարներ — նախ այն, վոր հեղափոխական շարժումն ու պրոլետարական հեղափոխությունը նախկին Ռուսաստանի գաղութներում, հանդիսանում են նախկին Ռուսաստանի ընդհանուր հեղափոխական պրոցեսի մի մասը, վոր ազգային կոմկուսների պատմությունը ՀամԿ(բ)Կ պատմության բաղկացուցիչ մասն է, և յերկրորդ այն՝, վոր յելնելով Ռուսաստանի նախկին գաղութների հեղափոխությունների ու կոմկուսակցությունների զարգացման առանձնահատկություններից, հարկավոր է այդպիսին ուսումնասիրել նաև վորպես վորոշ չափով ինքնուրույն պատմական մի պրոցես: Այս յերկու գաղափարների զուգորդման վրա էլ կազմված է ներկա ծրագիրը: Ծրագրի այսպիսի կառուցվածքն է միայն, վոր կարող է ապահովել ազգային կոմկուսակցությունների պատմության գիտական ճիշտ ըմբռնումն ու ուսումնասիրությունը:

Առաջին թեման — «ՀամԿ(բ)Կ-ն ԽՍՀՄ-ի բոլոր ժողովուրդների պրոլետարիատի կուսակցությունն է»— ներածական թեմա է ամբողջ դասընթացի համար: Նրա խնդիրն է,— առաջին՝ ամենաընդհանուր պատկերացում տալ ունկնդրին Ռուսաստանի, որպես գաղութային կայսրության մասին, ինչպես նաև ազգային-գաղութային հարցի այն առանձնահատկությունների մասին, որ կային ցարական Ռուսաստանում. յերկրորդ՝ ծանոթացնել այն պայքարի հիմնական էտապների հետ, որ վարում էին բոլշևիկները Լենինի ղեկավարությամբ, ռուսական կայսրության բանվոր դասակարգի միասնական միջազգային կուսակցություն ստեղծելու համար:

Այս թեմայի մշակման ժամանակ պրոպագանդիստը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ մի շարք հարցեր, վորոնք այստեղ ամենաընդհանուր գծերով են շոշափված միայն, հետևյալ թեմաներում ուսումնասիրվելու յեն ավելի մանրամասն ու խորացրած կերպով:

Յերկրորդ թեմայի—«Պայքար Հոկտեմբերի համար և ազգային կոմկուսակցությունների կազմակերպում» վերնագիրն արդեն բնորոշում է նրա բովանդակությունն ու ժամանակագրական շրջանակները: Այս թեմայի մշակման ժամանակ, անհրաժեշտ է նախ՝ բացահայտել ցարական Ռուսաստանի գաղութներում մինչև 1917 թվականը ծավալվող հեղափոխական շարժման և դասակարգային պայքարի զարգացման առանձնահատկությունները: Թեմայի այս մասի կենտրոնական կետն է հանդիսանում այն թեզը, վոր ցարական Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ազգային ազատագրական շարժումների և ընդհանուր հեղափոխական պայքարի մեջ հեգեմոն դերը պատկանել է պրոլետարիատին: Յերկրորդ՝ պետք է ունկնդրին ամենաընդհանուր գծերով ծանոթացնել այն պայքարի պատմությանը, վոր վարում էին բոլշևիկները Ուկրայինայում, Բելոռուսիայում, Անդրկովկասում և Միջին Ասիայում: Յերրորդ՝ անհրաժեշտ է ունկնդրին ծանոթացնել 1917 թվի հեղափոխության ընդհանուր ընթացքի հետ նախկին գաղութներում և ցույց տալ փետրվար-հոկտեմբեր ամիսների միջև ընկած ժամանակաշրջանի առանձնահատկությունները: Յեվ վերջապես, չորրորդ՝ հարկավոր է հետազոտել ազգային կոմկուսակցությունների կազմակերպման և պրոլետարական հեղափոխության հաղթանակի համար նրանց վարած պայքարի հիմնական էտապները:

Երրորդ թեմայի — «Ազգային կոմկուսակցությունները Նեպի վերականգնման շրջանում» — խնդիրն է — առաջին՝ ծանոթացնել վերականգնման շրջանի այն իրադրությունը, վոր կար դաշնակից հանրապետություններում, ինչպես նաև այն առանձնահատկությունները, վորով կիրառվում էր Նեպը, ազգային կոմկուսակցությունների կողմից: Յերկրորդ՝ վերլուծության յենթարկել ՀամԿ(բ)Կ-ի ազգային քաղաքականության հիմնական խնդիրներն ամբողջապես վերցրած և յուրաքանչյուր ազգային կոմկուսակցության դրանից բխող խնդիրներն առանձին վերցրած, մասնավորապես առանձին ուշադրություն պետք է նվիրել ԽՍՀՄ-ի և Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպման, Միջին Ասիայի ազգային-պետական սահմանազատման և հողային-ջրային-անասնապահական ռեֆորմների պատմական նշանակության բացատրությանը: Յերրորդ՝ լուսաբանել, թե ինչպիսի էտապներ և առանձնահատկություններ է ունեցել այն պայքարը, վոր մղել են ազգային կոմկուսակցությունները յերկու ֆրոնտի վրա, լենինյան գծի համար, ընդդեմ ընդհանուր կուսակցական թեքումների և նրանց նկատմամբ հաշտվողականության: Չորրորդ՝ ուսումնասիրել ազգային կոմկուսակցությունների պայքարը յերկու ֆրոնտի վրա՝ ազգային հարցում հայտնաբերված թեքումների դեմ, մասնավորապես անհրաժեշտ է յերևան հանել և ցույց տալ ընդհանուր կուսակցական թեքումների կապը, շաղկցումն ու փոխազդեցությունն ազգային հարցում յեղած թեքումների հետ ազգային կոմկուսակցություններում:



Չորրորդ թեմայի—«Ազգային կոմկուսակցությունները Նեպի վերակառուցման շրջանում» — մշակումն իր առաջ հետևյալ հիմնական խնդիրներն է դնում: Առաջին՝ ունկնդիրներին հասկացողություն տալ այն իրադրության մասին, վորի մեջ ազգային կոմկուսակցությունների ծավալում են սոցիալիստական շինարարությունը, նրանց ծանոթացնել վերակառուցման շրջանի առանձնահատկությունների հետ դաշնակից հանրապետություններում: Մասնավորապես պետք է վերլուծել դասակարգային պայքարի առանձնահատկություններն ու գյուղական տնտեսության կոլեկտիվացման խնդիրներն Արևելքում:

Յերկրորդ—վերլուծության յենթարկել ինչպես ՀամԿ(բ)Կ-ի, նույնպես և առանձին ազգային կոմկուսակցությունների ազգային քաղաքականության խնդիրները վերակառուցման շրջանում:

Յերրորդ—ուսումնասիրել հիմնական էտապները և առանձնահատկություններն այն պայքարի, վոր վարել են ազգային կոմկուսակցություններն այդ շրջանում՝ գլխավոր գծի և լենինյան ղեկավարության համար, ինչպես ընդհանուր կուսակցական թեքումների ու նրանց նկատմամբ հաշտվողականության, այնպես էլ ազգային հարցում յեղած թեքումների և նրանց նկատմամբ հաշտվողականության դեմ:

Այստեղ զանազան օպպոզիցիաների, մասնավորապես տրոցկիստական և աջ օպպոզիցիաների պլատֆորմների ու գործունեության վերլուծության ժամանակ պետք է բացահայտել նրանց կապն ազգային հարցում յեղած թեքումների հետ:

Չորրորդ—իբրև ամփոփում, հարկավոր է ցույց տալ տնտեսական, քաղաքական և կուլտուրական բուռն աճումն ազգային հանրապետություններում, վորոնք իրար հետ սերտ դաշնակցած հաղթականորեն սոցիալիզմ են կառուցում:

Հինգերորդ թեման — «Ի՞նչպիսի թշնամիների հետ պայքարելով աճեցին ազգային կոմկուսակցությունները» — ընդհանրացնում ե նախորդ թեմաները։ Այստեղ անհրաժեշտ ե, առաջին՝ վերլուծության յենթարկել այն պատմական իրադրության առանձնահատկությունները, վորի մեջ կազմակերպվեցին և զարգացան ազգային կոմկուսակցությունները, ինչպես նաև պրոլետարական հեղափոխության զարգացման և հաղթանակի առանձնահատկությունները նախկին ռուսական գաղութներում։ Մասնավորապես հարկավոր ե մերկացնել հոկտեմբերի բուրժուական և մանր-բուրժուական, աջ և «ձախ» ոպորտունիստական, մեծապետական և ազգային-դեմոկրատական կոնցեպցիաների հակապրոլետարական, հակամարքսիստական բնույթը։ Յերկրորդ՝ հարկավոր ե բացահայտել ազգային-կոմկուսակցությունների կազմակերպման, աճման և յերկու ֆրոնտի վրա վարած պայքարի որինաչափություններն ու առանձնահատկությունները, կանգ առնելով ազգային կոմկուսակցությունների ու նրանց հարևան արտասահմանյան ազգային կոմկուսակցությունների (որինակ՝ Արևմտյան Ուկրայինայի կոմկուսակցության, Արևմտյան Բելոռուսիայի կոմկուսակցության) պատմության ընդհանուր և առանձնահատուկ կողմերի վրա։

Յերրորդ՝ հարկավոր ե ցույց տալ ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի լենինյան ղեկավարության դերն ազգային կոմկուսակցությունների կազմակերպման, աճման և ամրապնդման գործում։ Չորրորդը՝ հարկավոր ե քննադատության յենթարկել ինչպես ազգային կոմկուսակցությունների սեփական պատմության մեծապետական ժխտումը, այնպես և ազգային կոմկուսակցությունների «յերկմտայնության» ազգայնական տեսությունները։

Վեցերորդ թեման — «Պայքար յերկու ֆրոնտի վրա՝ բոլշևիկյան տեսության և քաղաքականության համար ազգային հարցում» — յեզրափակիչ և ամփոփող մի թեմա յե հանդիսանում։

Այստեղ անհրաժեշտ ե, առաջին՝ վերլուծության յենթարկել բոլշևիկյան ազգային ծրագրի համար յերկու ֆրոնտի վրա մղված պայքարի՝ հիմնական ետապներն ու առանձնահատկությունները։ Յերկրորդ՝ հարկավոր ե համեմատության դնել ազգային հարցի լուծումը «մեզ մոտ» ու «նրանց մոտ» և ցույց տալ, վոր միայն պրոլետարական դիկտատուրան եր, վոր ապահովեց ազգային հարցի լուծումը։ Յերրորդ՝ պետք ե ընդգծել ՀամԿ(բ)Կ ազգային քաղաքականության և ազգային կոմկուսակցությունների գործունեյության միջազգային նշանակությունը։

Ներկա ծրագրի նպատակն ե՝ բացահայտել բոլշևիզմի ձևավորման, աճման, ամրապնդման և հաղթանակի պրոցեսը ցարական Ռուսաստանի նախկին գաղութներում, բացահայտել այն պրոցեսը, վորով ազգային կոմկուսակցությունները դարձան պրոլետարիատի և բովանդակ աշխատավորության միակ ղեկավարը։ Մենք այդ պրոցեսը վերցրել ենք յերկու ֆրոնտով պայ-



քարի տեսանկյան տակ — պայքար ընդդեմ աջ և «ձախ» ոպորտունիզմի ընդհանրապես, ընդդեմ ազգային հարցում յեղած ոպորտունիզմի մասնավորապես (թե մեծապետական և թե տեղական — նացիոնալիստական դրսևորումները), ընդդեմ ամեն տեսակ թեքումների նկատմամբ հաշտվողականության։ Ծրագրում զգալի ուշադրություն ե դարձված այն պայքարի վերլուծությանը, վորը մղվում ե ընդդեմ բուրժուական ու մանր-բուրժուական կուսակցությունների, ինչպես նաև ընդդեմ ազգային հարցի նկատմամբ ազգային կոմկուսակցությունների շարքերում հանդես յեկող թեքումների։

Այստեղ անհրաժեշտ ե ընդգծել հետևյալ յերեք դրությունները — առաջին՝ այս պայքարը քննարկվում ե վոչ թե մեկուսացված ձևով, այլ իբրև պրոլետարական հեղափոխության հաղթանակի համար մղվող ընդհանուր պայքարի, կուսակցության գլխավոր գծի համար մղվող ընդհանուր պայքարի բաղկացուցիչ մի մասը։

Յերկրորդ՝ այն, վոր այդ պայքարի պրոցեսում ազգային կոմկուսակցություններն ուղղեցին իրենց սխալները և ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի անմիջական ղեկավարությամբ սովորեցին ճիշտ կիրառել լենինիզմի սկզբունքներն իրենց իրադրության բարդ ու յուրահատուկ պայմաններում, յերրորդ՝ այն, վոր նախկին ռուսական գաղութներում պրոլետարական հեղափոխության և բոլշևիզմի տարած հաղթության պրոցեսում մանր-բուրժուական քայքայված կուսակցությունների ամենից ավելի հեղափոխական տարրերի միացումն ազգային կոմկուսակցություններին, չեր նշանակում այն, թե ազգային կոմկուսակցությունները վորևե չափով ընդունեցին այդ կուսակցությունների հայացքների ու պահանջների այս կամ այն մասը, այլ միայն այն, վոր այդ տարրերը կանգնեցին պրոլետարիատի տեսակետի՝ լենինիզմի տեսակետի վրա։ Ազգային կոմկուսակցությունների կազմակերպման, զարգացման և հաղթանակի պատմական պրոցեսի լուսաբանման հիմքում այն միտքն ե դրված, վոր ազգային կոմկուսակցություններն առաջացել են մի արմատից, և այդ արմատը բոլշևիկյան կազմակերպություններն են։

Յեզրափակելով, միքանի խոսք ասենք գրականության մասին։ Ունկնդիրների համար հիմնական և միակ ձեռնարկ ե հանդիսանում Վոլինի դասագիրքը՝ «Краткие очерки по истории нацкомпартий», իսկ ղեկավարի համար գրականության ցուցակ կազմելն զգալի դժվարություն ե ներկայացնում։ Մի շարք հարցերի վերաբերյալ ընդհանրապես գրականություն չկա, մի շարք այլ հարցերի վերաբերյալ՝ մեծ մասամբ դաշնակից հանրապետություններում տպագրված գրականությունը դժվար ե ճարվում տեղերում։ Գրացուցակից օգտվելիս՝ անհրաժեշտ ե այդ նկատի ունենալ։

# ԱԶԳԱՅԻՆ ԿՈՄ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## ԱՌԱՋԻՆ ԹԵՄԱ

### ՀամԿ(բ)Կ-ն ԽՍՀՄ-ի բոլոր ժողովուրդների պրոլետարիատի կուսակցությունն է

*Ազգային կոմկուսակցությունների պատմության ուսումնասիրության նշանակությունը: Ազգային կոմկուսակցությունները ՀամԿ(բ)Կ բաղկացուցիչ մասն են կազմում:*

*Ցարական Ռուսաստանը, մեծագույն գաղութային կայսրություն էր: Իմպերիալիզմը և «ռազմա-ֆեոդալական իմպերիալիզմը» Ռուսաստանում: Բանվոր դասակարգի աճումը 19-րդ դարի յերկրորդ կեսին, բանվոր դասակարգի կազմն ու կառուցվածքը ցարական Ռուսաստանի մետրոպոլիայում և գաղութներում: Ընդհանուր հեղափոխական շարժումը և ազգային-ազատագրական շարժման տեղը նրա մեջ: Ազգային-գաղութային հարցը ցարական Ռուսաստանում և բանվորական շարժումը:*

*ՌՍԴԲԿ կազմակերպումն ու նրա միջազգային բնույթը: Ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջացումը: Բոլշևիկների պայքարը յերկու ֆրոնտի վրա՝ Ռուսաստանի կայսրության սահմաններում, լենինյան ազգային քաղաքականության հիման վրա, բանվոր դասակարգի միասնական, ինտերնացիոնալ կուսակցություն ստեղծելու համար:*

*II համագումարը և ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները (պայքար «Բունդ»-ի սեպարատիզմի և Լեհաստանի ու Լիտվայի սոցիալ-դեմոկրատիայի նիհիլիզմի դեմ): Կուսակցության III համագումարն ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մասին: ՌՍԴԲԿ և ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները IV և V համագումարներում: Բոլշևիզմն ու ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները յերկու հեղափոխությունների միջև ընկած ժամանակաշրջանում: Պայքարը մեծապետական թեքումների դեմ: Պայքար ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մեջ յեղած սեպարատիստական և ֆեդերալիստական տենդենցների դեմ: Ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների վերաբերմունքն այն պայքարի հանդեպ, վոր մղում էին բոլշևիկները մենշևիկների դեմ: Զատորոշման պրոցեսներն ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մեջ: Ոպորտունիզմի և նացիոնալ-սոցիալիզմի կապը:*

*Բոլշևիկները և ազգային հարցը 1917 թ. հեղափոխության մեջ: Բոլշևիկյան կազմակերպություններն ազգային շրջաններում: Կուսշինարարության ազգային մոմենտներն ապրիլյան կոնֆերենցիայում և VI համագումարում: Կուսշինարարության ազգային մոմենտները հոկտեմբերից հետո: VIII համագումարն ազգային կուսկազմակերպությունների մասին: Ազգային սեկցիաների կազմակերպումը: Աշխատանքն Արևելքում: Ազգային կոմկուսակցությունների կազմակերպումը և նրանց կազմակերպման ժամանակ յերևան յեկած թեքումների դեմ մղվող պայքարը: Մանր-բուրժուական նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունների քայքայումը և նրանց ամենից ավելի հեղափոխական տարրերի նվաճումը բոլշևիզմի կողմից: Կուսշինարարության ազգային մոմենտները X և XII համագումարներում: Կուսշինարարության ազգային մոմենտները XVI համագումարում:*

*ՀամԿ(բ)Կ ազգային կադրերի աճումը:*

*ՀամԿ(բ)Կ-ն ԽՍՀՄ-ի բոլոր ժողովուրդների պրոլետարիատի կուսակցությունն է:*

## ՅԵՐԿՐՈՐԴ ԹԵՄԱ

# ՊԱՅՔԱՐ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

### Տնտեսական զարգացման և դասակարգային պայքարի առանձնահատկությունները ցարական Ռուսաստանի գաղութներում մինչև 1917 թ.

*Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում և նրա գաղութներում: Ազգային-գաղութային քաղաքականության առանձնահատկությունները ցարական Ռուսաստանում: Ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականությունը: Դասակարգային պայքարի զարգացման ընդհանուր և տարբեր գծերը Ուկրայինայում, Բելոռուսիայում, Անդրկովկասում և Միջին Ասիայում: Ազգային և ագրարային-գյուղացիական հարցը ցարական Ռուսաստանում: Ազգային շարժումը, նրա դասակարգային բազան և հիմնական ազգային կուսակցությունները: Ազգային շարժման յերկու տենդենցները (հեղափոխական-դեմոկրատական և բուրժուական-ռեֆորմիստական):*

*Բուրժուա-դեմոկրատական հեղափոխության առանձնահատկությունները գաղութներում: 1905 թ. հեղափոխությունը Ռուսաստանի գաղութներում: Իմպերիալիստական պատերազմը և ազգային-գաղութային ճնշման սրումն ցարական Ռուսաստանում 1916 թ. ապստամբությունը Միջին Ասիայում: Պրոլետարիատը վորպես հեգեմոն ցարական Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ընդհանուր հեղափոխական պայքարում և ազգային-ազատագրական շարժումներում:*

*Ռուսական գաղութների բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հիմնական էտապները մինչև 1917 թ. Ուկրայինայի, Բելոռուսիայի և Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները: Նրանց աշխատանքի առանձնահատկությունները: Նրանց տեղը կուսակցության պատմության մեջ: Բոլշևիկները Միջին Ասիայում: Բոլշևիզմի ազդեցությունը ցարական Ռուսաստանի գաղութների բանվորական շարժման վրա 1917 թվականի նախորյակին:*

## 1917 թ. հեղափոխությունն իմպերիալիստական Ռուսաստանի գաղութներում

ՓԵՏՐՎԱՐ։ Բանվորական, զինվորական և գյուղացիական պատգամավորների խորհուրդների կազմակերպումը։ Երկիշխանությունը և նրա առանձնահատկությունները գաղութներում։ Ազգային շարժման աճումը։ Նրա կենտրոնների կազմակերպումն Ուկրաինայում, Բելոռուսիայում, Անդրկովկասում, Միջին Ասիայում, նրանց դասակարգային բնութագրումը։

Ժամանակավոր կառավարության ազգային քաղաքականությունը և նրա մեծապետական բնույթը։ Ռուսաստանի մանր-բուրժուական կուսակցությունների քաղաքականության մեծապետական բնույթը։ Հեղափոխության հիմնական էտապները — ապրիլ, հունիս, հուլիսյան օրերը, կորնիլովշչինան և հեղափոխության ծավալումը գաղութներում։ Փետրվարից—հոկտեմբեր ամիսների միջև ընկնող ժամանակաշրջանի առանձնահատկությունները գաղութներում։

## Բոլշևիկյան կազմակերպությունները գաղութներում 1917 թվին

Բոլշևիկյան կազմակերպությունների դրությունը փետրվարյան օրերին։ Պայքար «միավորման մոլության» դեմ։ Պայքար մասսաների և խորհուրդների համար։ Բոլշևիկները և ազգային շարժումը։ Կուսակցության աճումը։ Բոլշևիկյան ինքնուրույն կազմակերպությունների կազմակերպչական և գաղափարական ամրապնդումն Ուկրաինայում, Բելոռուսիայում և Միջին Ասիայում։ Բոլշևիկների առաջին ինքնուրույն ելույթները Թուրքմենիստանում։ Պայքար օպորտունիստական տատանումների դեմ բոլշևիկյան կազմակերպություններում։ Բոլշևիկների մարզային համագումարներն Ուկրաինայում, Բելոռուսիայում և Անդրկովկասում։ Բոլշևիզմի ուժերը գաղութներում հոկտեմբերի նախօրյակին։ Հոկտեմբեր։ Հոկտեմբերյան հեղափոխության առանձնահատկությունները։ Հոկտեմբերյան հեղափոխությունն ու ազգային հարցը։ Իրավունքների դեկլարացիան։ Ազգային ժողկոմատի կազմակերպումն ու նրա գործունեությունը։ Հոկտեմբերը և նացիոնալիստական հակահեղափոխությունը։ Հոկտեմբերը Ռուսաստանի նախկին գաղութներում։ Բրեստի հաշտությունը և ազգային հարցը։

## Ուկրաինական կոմկուսակցության խորհրդային Ուկրաինայի համար մղած պայքարի հիմնական էտապները։

Համաուկրաինական կուսկոնֆերենցիան և խորհուրդների համաուկրաինական առաջին համագումարը։ ՌՍՖԽՀ ժողկոմխորհի վերջնագիրը Կենտրոնական Ռադային։ Խորհրդային իշխանության հաստատումն Ուկրաինայում։ Պայքար Կենտրոնական Ռա-



դայի դեմ և խորհուրդների հաղթանակը։ Խորհրդային իշխանության առաջին շրջանն Ուկրաինայում։ Կենտրոնական Ռադայի բրեստյան հաշտությունը և Ուկրաինայի օկուպացիան Ավստրո-գերմանական իմպերիալիզմի կողմից։ Պայքար համաուկրաինական կուսակցության միավորման համար։ Տագանրոգի խորհրդակցությունը։ ՈՒԿ.Կ. (բ) Կ. կազմակերպումը։ Գերմանական հեղաշրջումը։ ՈՒԿ.Կ. (բ)Կ. պայքարն Ավստրո-գերմանական իմպերիալիզմի և գետմանների դեմ։

ՈւԿ. (բ) Կ. I և II համագումարները։ Աջերի և «ձախերի» պայքարն այդ համագումարներում։ Ուկրաինական կոմկուսակցության «ձախերի» կապը «ձախ կոմմունիզմի» հետ։ ՌԿ(բ)Կ դիրքն այդ պայքարում։ Գերմանական հեղափոխությունը և համաուկրաինական զինված ապստամբությունը Գետմանի դեմ։ Իշխանության անցումն պետլյուրովյան դիրեկտորիային և ուկրաինական կոմկուսակցության պայքարը նրա դեմ։ Խորհրդային իշխանության II շրջանն Ուկրաինայում։ ՈւԿ (բ) Կ III համագումարը և նրա սխալներն ազգային ու գյուղացիական հարցերում։ Ուկրաինայի գրավումը ռուսական սպիտակ-գվարդիականության (Դենիկինի) կողմից։ Պայքար ֆեդերալիզմի դեմ։ Մանր-բուրժուական կուսակցությունների քայքայումը։ Լենինը և ՌԿ(բ)Կ ԿԿ-ը Խորհրդային իշխանության խնդիրների մասին Ուկրաինայում։ ՌԿ(բ)Կ դեկտեմբերյան կոնֆերենցիան 1919 թ. Նրա նշանակությունն ուկրաինական կոմկուսակցության պատմության մեջ։ Խորհրդային իշխանության III շրջանը։ ՈւԿ Կ (բ) Կ IV կուսկոնֆերենցիան։ Չքավորական, գյուղացիական կոմիտեների կազմակերպումը։ Պայքար բանդիտիզմի դեմ։ Ֆրոնտների լիկվիդացիան։ Խորհրդային Ուկրաինայի ամրապնդումը։

## Բելոռուսիայի կոմկուսակցության խորհրդային Բելոռուսիայի համար մղած պայքարի հիմնական էտապները.

Արևմտյան ճակատի ռազմա-հեղափոխական կոմիտեի և Արևմտյան մարզի ժողկոմխորհի կազմակերպումը։ Խորհրդային իշխանության առաջին շրջանը Բելոռուսիայում։ Պայքար լեհական և բելոռուսական հակահեղափոխության դեմ։ Բելոռուսիայի օկուպացիան գերմանական իմպերիալիզմի կողմից։ Արևմտյան մարզի խորհուրդների II-րդ և III-րդ համագումարները։ Բոլշևիկների ընդհատակյա պայքարը։ Գերմանական հեղափոխությունը և հակահեղափոխության անկումը։ Բ. Կ. (բ) Կ. I-ին համագումարը։ Բ.Խ.Ս.Հ. կազմակերպումն։ Խորհրդային իշխանության երկրորդ շրջանը Բելոռուսիայում։ Լիտվական Բելոռուսիայի հանրապետության և լիտվական Բելոռուսիայի կոմկուսակցության կազմակերպումը։ Խորհրդային իշխանության տապալումը։ Լեհական օկուպացիայի շրջանը։ Բոլշևիկյան ընդհատակյա կազմակերպությունը սպիտակ-լեհացիների դեմ վարած պայքարում։ Խորհրդային իշխանության III շրջանը։ Պայ-

քար բանդիտիզմի դեմ: Մանր-բուրժուական կուսակցությունների քայքայումը: Ֆրոնտների լիկվիդացիան: Խորհրդային Բելոռուսիայի ամրապնդումը:

### Բոլշևիկների կողմից խորհրդային Անդրկովկասի համար մղված պայքարի հիմնական էտապները

Անդրկովկասյան կառավարության ստեղծումը և նրա պայքարը բոլշևիկների դեմ: Վրացական մենշևիկների հակահեղափոխական դերը: Բաքվի կոմունան և նրա անկումը: Բոլշևիկների ընդհատակյա գործունեության անցնելը: Անդրկովկասյան հանրապետության անկումը և Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի բուրժուական հանրապետությունների կազմակերպումը: Ազգայնական գզվռտոցները բուրժուական Անդրկովկասում: Բոլշևիկների ընդհատակյա աշխատանքն Անդրկովկասի հանրապետություններում: Մենշևիկյան դիկտատուրան Վրաստանում, դաշնակցական դիկտատուրան Հայաստանում և Մուսավաթական դիկտատուրան Ադրբեջանում: Անդրկովկասյան հեղափոխությունը և իմպերիալիստների ինտերվենցիան Անդրկովկասում: Ազգային պրոլետարիատի բոլշևիկացումն երկու ֆրոնտով պայքարի հիման վրա: Գյուղացիության նվաճումը: Մասսաների պայքարը խորհուրդների համար—Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ: Հումմեթ և Ադալաթը Ադրբեջանում: Բոլշևիկների կովկասյան երկրային կոմիտեն: Ադրբեջանի կոմկուսի կազմակերպումը: Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների II համագումարը: Խորհուրդների հաղթությունն Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում: Լենինը և Ստալինը Անդրկովկասյան բոլշևիկների խնդիրների մասին: Խորհրդային Անդրկովկասի ամրապնդումը:

### Թուրքեստանի կոմկուսակցության միջին Ասիայի խորհրդայնացման համար մղած պայքարի հիմնական էտապները

Իշխանության անցումը խորհուրդներին: Խորհուրդների երկրային 3-րդ համագումարը և Կենտգործկոմի ու Ժողկոմխորհի ընտրությունը: Խորհրդային Թուրքեստանը և հակահեղափոխությունը. «Կոկանդական ինքնավարությունը». Օրենբուրգյան հանգույցը, բասմաչների շարժման սկիզբը: Տնտեսական ճգնաժամն ու քաղաքացիական պատերազմը: Արշավ Բուխարայի վրա: Խորհուրդների 5-րդ երկրային համագումարը: Լենինի և Ստալինի նամակը: Թուրքեստանի ինքնավարության հռչակումը: Թուրքեստանի կոմկուսակցության I համագումարը: Անդրկովկասյան ֆրոնտի առաջացումը: Խորհրդային Թուրքեստանն ու անգլիական իմպերիալիզմը: Խորհրդային իշխանության վերականգնումը Թուրքեստանում: Քաղաքային կոլոնիզատորական բուրժուազիայի (ոսիպովյան ապստամբությունը) և վերաբնակչային կուլակության հակահեղափոխական շարժումները: Թ. Կ. Կ. II համագումարը: Թ. Կ. Կ. III և IV համագումարները: Ռ. Կ. Կ. Մուսուլմ. բյուրոյի ստեղծումը: Ռ. Կ. Կ. մուսուլմանական կազմակերպությունների երկրային I կոնֆերենցիան և նրա վորոշումները: Ռ. Կ. Կ. մուսուլմանական բյուրոյի երկրային II կոնֆերենցիան: Մուսուլմանական բյուրոյի III և Թ. Կ. Կ. V կոնֆերենցիան ու Թուրքեստանի կոմունիստական կուսակցությունների միացումը: Օրենբուրգյան հանգույցի լիկվիդացիան: Հեղափոխություն Խիվայում և Բուխարայում և ժողովրդական խորհրդային հանրապետությունների կազմակերպումը: Ազգային հարցը Թուրքեստանում: Թ. Կ. Կ. սխալներն ազգային հարցում: Թուրքեստանյան հանձնաժողովի գալուստը և նրա պայքարը մեծապետական ու տեղական նացիոնալիզմի դեմ: Ռ. Կ. (բ) Կ. Կ. Կ.-ի Թուրք բյուրոն: Թ. Կ. Կ. V-րդ համագումարն ու նրա նշանակությունը: «Կոշչի» Միության կազմակերպումը: Ֆրոնտների լիկվիդացիան: Պայքար բասմաչների շարժման դեմ:

ՅԵՐՐՈՐԴ ԹԵՄԱ

## ԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՊԻ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Տնտեսական-քաղաքական ճգնաժամը խորհրդային հանրապետության մեջ: Դիսկուսիա Արհմիությունների մասին: X համագումարը և ՆԵՊԻՆ անցնելը: ՆԵՊԻ կիրառման առանձնահատկություններն Ուկրաինիայում, Բելոռուսիայում, Անդրկովկասում և Միջին Ասիայում:

Ազգային հարցը վերականգնման շրջանում: X և XII համագումարներն ու IV ազգային խորհրդակցությունը կուսակցության ազգային քաղաքականության հիմնական խնդիրների մասին: Պայքար տնտեսական և կուլտուրական փաստական անհավասարության լիկվիդացիայի համար, պայքար երկու ֆրոնտի վրա ազգային հարցում եղած թեքումների դեմ: Մեծապետական շովինիզմը վորպես գլխավոր վտանգ: Արմատացման պրոբլեմը: Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպումը: ԽՍՀՄ-ի կազմակերպումը: Միջին Ասիայի ազգային-պետական սահմանազատումը և նրա պատմական նշանակությունը: Ազգային կոմկուսակցությունների կազմակերպումը Միջին Ասիայում: Հողային-ջրային—անասնապահական ռեֆորմներն ու նրանց նշանակությունը: Վրացական մենշևիզմի լիկվիդացիան:

Պայքար երկու ֆրոնտի վրա լենինյան գծի և միասնականության համար ՆԵՊԻ վերականգնման շրջանում: Պայքար «բանվորական օպոզիցիայի» և տրոցկիզմի դեմ: 1923 թ. դիսկուսիան ու պայքար ազգային կոմկուսակցությունների մեջ եղած մանր-բուր-

ժուական թեքումների դեմ։ Պայքար յերկու ֆրոնտի վրա ազգային հարցում յեղած թեքումների դեմ։ Պայքար մեծապետական («յերկու կուլտուրաների պայքարի տեսությունը») և Ուկրայինական ազգայնական թեքումների դեմ Ուկրայինական կոմկուսի ներսում։ Մեծապետական շովինիզմը Բելոռուսիայում։

Ազգայնական թեքումները Բելոռուսիայի կոմկուսակցության մեջ և պայքար նրանց դեմ։ Մեծապետական շովինիզմն Անդրկովկասում։ Պայքար վրացական և թուրքական ուկլոնիստների և հայ սպեցիֆիկների դեմ Անդրկովկասի կոմկուսակցություններում։ Մեծապետական շովինիզմը Միջին Ասիայում։ Ազգայնական թեքումները Միջին Ասիայի ազգ. կոմկուսակցություններում և պայքար նրանց դեմ։ Սուլթան-Գալիևշչինա։ 4-րդ ազգ. խորհրդակցությունն ու նրա նշանակությունը ազգային կոմկուսակցությունների պատմության մեջ։ Ընդհանուր կուսակցական և ազգայնական թեքումների կապը, շաղկապումը և փոխազդեցությունը։ Ազգային կոմկուսակցությունների աճումը և ամրացումը։ Վերականգնման շրջանի արդյունքներն Ուկրայինայում, Բելոռուսիայում, Անդրկովկասում և Միջին Ասիայում։

ՉՈՐՐՈՐԴ ԹԵՄԱ

## ԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՊԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Անցումն վերակառուցման շրջանին։ XIV համագումարն ու «նոր օպոզիցիան»։ Ինդուստրացման լոզունգը։ Կուսակցության պայքարը տրոցկիստական օպոզիցիայի դեմ։ Համ Կ (բ) Կ XV համագումարը։ Ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։ Կուլտուրական հեղափոխություն։ Հնգամյակն ու սոցշինարարության պրոբլեմն ազգային հանրապետություններում։ Յերկրորդ ածխա-մետաղագործական բազայի ստեղծումն Արևելքում։ Դասակարգային պայքարը վերակառուցման շրջանում։ Դասակարգային պայքարի առանձնահատկություններն Արևելքում։ Հակահեղափոխական վնասարար կազմակերպությունները — Աշխատավոր գյուղացիական կուսակցություն, «արդյունաբերական կուսակցություն» և մենշևիկների «Միութենական բյուրոն» և նրանց գործունեությունն ազգային հանրապետություններում։ Բուրժուական Ռեստավրատորների ազգային ծրագրերն ու նրա մեծապետական բնույթը։ Ազգայնական հակահեղափոխական կազմակերպությունները՝ Ուկրայինայի ազատագրման Միություն, Բելոռուսիայի Ազատագրման Միություն, Սուլթան Գալիևշչինա, Կասիմովշչինա և նրանց ծրագիրը։ Մեծապետական և ազգայնական հակահեղափոխական կազմակերպությունների կապակցությունը։ Վնասարարությունն ու ինտերվենցիան։ Ազգային-կոմկուսակցություններն ինտերվենցիայի վտանգի դեմ մղվող պայքարում։



Կոլեկտիվացման պրոբլեմն ազգային հանրապետություններում։ Ուկրայինայի գյուղատնտեսության հարցերը Կենտկոմի 1928 թ. նոյեմբերյան պլենումում։ Համ. Կ. (բ) Կ. Կենտկոմի հունվարյան վորոշումը կոլեկտիվացման ժամկետների մասին։ Կոլեկտիվացման առանձնահատկություններն ազգային շրջաններում։ Կոլտնտեսական շինարարության հաջողություններն Արևելյան գյուղում։ Կուլակությունը սահմանափակելու և դուրս մղելու քաղաքականությունից դեպի համատարած կոլեկտիվացման հողի վրա կուլակությունը լիկվիդացիայի յենթարկելու քաղաքականությունը։ Աջ թեքումն ու «ձախ» խոտորումները Արևելքի գյուղում համատարած կոլեկտիվացում անցկացնելու խնդրում։ Ստալինը Արևելքի «հաջողություններից առաջացող գլխապտույտի» մասին։

Ազգային հարցը վերակառուցման շրջանում։ Արմատացման պրոբլեմը։ Կուսշինարարության խնդիրներն ազգային կոմկուսներում։ Ազգային պրոլետարիատի կադրերի պատրաստումը։ Ազգային կոմկուսների ազգային և սոցիալական կազմը։ Կուսակցության, խորհուրդների, Արհմիությունների, կոմյերիտմիության ապարատների արմատացման ասպարեզում ձեռք բերված հաջողությունները։ Բովանդակությամբ սոցիալիստական և ձևով ազգային կուլտուրաների բարգավաճումը վերակառուցման շրջանում։ Լենինը և Ստալինը ազգային կուլտուրայի մասին բուրժուական դիկտատուրայի շրջանում և պրոլետարական դիկտատուրայի շրջանում։ Իդեոլոգիական ֆրոնտի դասակարգային պայքարը ազգային հանրապետություններում։

Պայքար յերկու ֆրոնտի վրա լենինյան գծի և միասնականության համար ՆԵՊԻ վերակառուցման շրջանում։ Աջ թեքումն ու պայքարը նրա դեմ ազգային կոմկուսակցություններում։ Աջ օպորտունիզմն իբրև գլխավոր վտանգ տվյալ շրջանում։ Պայքար «ձախ» օպորտունիզմի դեմ ազգային կոմկուսակցություններում։ Պայքար աջ-«ձախ» բլոկի դեմ ազգային կոմկուսակցություններում։

Պայքար յերկու ֆրոնտի վրա ազգային հարցում յեղած թեքումների դեմ։ Մեծապետական թեքումն ազգային կոմկուսներում և պայքարը նրանց դեմ։ Պայքար շումսկիզմի դեմ Ուկրայինայում, ազգային օպորտունիզմի դեմ՝ Բելոռուսիայում, ազգայնական թեքումների դեմ՝ Անդրկովկասի և՝ Միջին Ասիայի կոմկուսակցություններում, սադվոկասովշչինայի դեմ Կազակստանում և այլն։ Ուկրայինական կոմկուսակցությունը և Արևմտյան Ուկրայինայի կոմկուսակցությունը, Բելոռուսական կոմկուսակցությունը և Արևմտյան Բելոռուսիայի կոմկուսակցությունը։ Վելիկոռուսական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի շարակցման տարրեր։ Տրոցկիստական օպոզիցիան և ազգայնական թեքումները։ Վահանյանականությունը։ Աջ թեքումն ու ազգայնական թեքումները։ Ստալինը ազգային հարցում յեղած թեքումների դեմ

յերկու ֆրոնտով պայքարելու մասին, Համ. Կ. (բ) Կ. XVI համագումարում: Պայքար մեծապետական այն թեքի դեմ, վոր պահանջում է սոցիալիստական շինարարության շրջանում «հանել» ազգային հարցը: Մեծապետական թեքումն իբրև գլխավոր վտանգ տվյալ շրջանում: Տեղական, ազգայնական թեքման դեմ մղվող պայքարի ուժեղացման խնդիրները: Ազգային հարցում յեղած թեքումների նկատմամբ հաշտվողական վերաբերմունքը և պայքար նրա դեմ:

Կուսակցությունը ՆԵՊԻ վերջին շրջանում, այն է՝ սոցիալիզմի առաջին շրջանում: Կուսակցության XVI կուսհամագումարն՝ իբրև ամբողջ ֆրոնտով ծավալուն սոցիալիստական հարձակման համագումար և նրա պատմական վորոշումները: ԽՍՀՄ-ի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտումը: Հընգամյակի յերրորդ տարին և ազգային կոմկուսակցությունների խնդիրները: Պայքար ածխի, նավթի և բամբակի անկախության համար: Հետամնաց ժողովուրդների սոցիալիստական զարգացման թափի արագացումը:

### ՀԻՆԳԵՐՈՐԴ ԹԵՄԱ.

## Ի՞ՆՉՊԻՍԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՀԵՏ ՊԱՅՔԱՐԵԼՈՎ ԱՃԵՑԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերածման պրոցեսի առանձնահատկությունները: Բուրժուա-դեմոկրատական խնդիրները (ազգային և հողային հարցերը) պրոլետարական հեղափոխության մեջ: Քաղաքացիական պատերազմը Ռուսաստանի նախկին գաղութներում ազգայնական հակահեղափոխության, ռուսական սպիտակ-գվարդիականության և միջազգային իմպերիալիզմի միասնական ճակատը: Պրոլետարական հեղափոխությունը գաղութներում և ինտերվենցիան: Մենշևիկներն ու եսերներն իբրև հակահեղափոխության գործակալներ: Ազգային կոմկուսակցությունների կազմակերպման և զարգացման առանձնահատկությունները: Պրոլետարական հեղափոխության զարգացման և հաղթանակի ավելի տեվական և բարդ պրոցեսը:

Հոկտեմբերի բուրժուական և մանր բուրժուական, օպորտունիստական, մեծապետական և ազգային-դեմոկրատական կոնցեպցիաները նախկին Ռուսաստանի գաղութներում:

Բոլշևիկների պայքարը Ռուսաստանի մանր-բուրժուական և տեղական ազգայնական կուսակցությունների դեմ: Այդ բուրժուական և մանր-բուրժուական կուսակցությունների ջախջախումն ու լիկվիդացիան: Նացիոնալ-սոցիալիստական մանր-բուրժուական կուսակցությունների լավագույն և ամենից ավելի հեղափոխական տարրերի գրավումը բոլշևիզմի կողմը: Պրոլետարական հեղափոխության հետեվանքով և նրա պրոցեսում այդ տարրերն սկսում են կանգնել պրոլետարական տեսակետի վրա:

Այն իրադրության առանձնահատկությունները, վորի մեջ



կազմակերպվեցին և աճեցին ազգային կոմկուսակցությունները: Պրոլետարական հեղափոխության առանձնահատկությունները Ռուսաստանի նախկին գաղութներում:

Ազգային կոմկուսակցությունների յերկու ֆրոնտով պայքարը սեվական շարքերում յեղած թեքումների դեմ: Պայքար Համ. Կ. (բ) Կ. ներսում յեղած թեքումների և նրանց արտահայտությունների դեմ ազգային կոմկուսակցությունների մեջ: Արհմիութենական դիսկուսիա, պայքար, «բանվորական օպպոզիցիայի», «դեմոկրատական ցենտրալիզմի» խմբի, տրոցկիստական օպպոզիցիայի դեմ նրա զարգացման տարբեր ետապներում, աջ թեքման, «ձախ» խոտորումների» և աջ—«ձախ» բլոկի դեմ: Ազգային կոմկուսակցությունների պայքարը ազգային հարցում յեղած թեքումների դեմ:

Զանազան ազգային կոմկուսակցություններում գոյություն ունեցող թեքումների միջև յեղած ընդհանուր և տարբերիչ գծերը: Թեքումների սոցիալական արմատները: Յերկու ֆրոնտով պայքարի առանձնահատկություններն ազգային կոմկուսներում: Ընդհանուր կուսակցական և ազգայնական թեքումների կապն ու փոխադարձությունը: Ազգային կոմկուսակցությունների ներկուսակցական պայքարի կապը արտասահմանյան կոմկուսակցությունների (Արեվմտյան Ուկրայինայի, Արեվմտյան Բելոռուսիայի) ներկուսակցական պայքարի հետ:

Ազգային կոմկուսակցությունների պայքարը լենինյան գծի և բոլշևիկյան ղեկավարության համար: Ազգային կոմկուսակցությունների աճումն ու գաղափարական կոնսոլիդացիան:

Ազգային կոմկուսակցությունների զարգացման առանձնահատկությունները: Ազգային կոմկուսակցությունների «յերկմտայնության» հակալենինյան տեսությունների քննադատությունը: Բոլշևիկյան կազմակերպությունների զարգացումն ու ազգային կոմկուսակցությունների փոխակերպվելը: Ազգային կոմկուսակցությունները Համ. Կ. (բ) Կ. ի բաղկացուցիչ մասերն են:

### ՎԵՑԵՐՈՐԴ ԹԵՄԱ

## ՊԱՅՔԱՐ ՅԵՐԿՈՒ ՖՐՈՆՏԻ ՎՐԱ ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ

Բոլշևիզմի ծրագրի զարգացման հիմնական ետապներն ազգային հարցում: Ազգային հարցի առթիվ «Իսկրա»-յի ծրագրի մշակումը Լենինի միջոցով և պայքար այդ ծրագրի համար II համագումարի նախօրյակին և II համագումարում:

Ազգային հարցի բոլշևիկյան ծրագրի համար յերկու ֆրոնտով մղվող պայքարը յերկու հեղափոխությունների միջեվ ընկնող ժամանակաշրջանում: Ապրիլյան կոնֆերենցիան և նրա տեղը բոլշևիկյան ազգային ծրագրի մշակման պատմության մեջ:





Библиотека Института Востоковедения Академии Наук СССР
ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм. ССР им. А. М...

VIII համագումարը։ Ազգային հարցը կուսակցության ծրագրում և պայքար ապօրտունիզմի դեմ համագումարում։ X և XII կուսհամագումարներն ու նրանց նշանակությունը ազգային հարցի բոլշևիկյան տեսության մշակման պատմության մեջ։ Համ. Կ. (բ) Կ. XVI համագումարն ազգային հարցի մասին։ Կոմինտերնի ծրագիրը պրոլետարիատի դիկտատուրայի ազգային քաղաքականության մասին։ Ազգային հարցի բոլշևիկյան տեսությունը Լենինի և Ստալինի մոտ։ Ազգային հարցի բոլշևիկյան տեսության մշակման յերկու ետապները։ Լենինն ու Ստալինը ազգային հարցում յեղած թեքումների դեմ յերկու ֆրոնտով պայքարելու մասին։

Ազգային հարցի բոլշևիկյան տեսության ճշտության հաստատումը գործնականում։ ԽՍՀՄ-ի և ազգային հանրապետությունների կազմակերպումը ազգերի ինքնորոշման բոլշևիկյան լոզունգի գործնական իրացումն է։ Ազգերի կոնսոլիդացիան և ձևով ազգային, բովանդակությամբ, պրոլետարական կուլտուրայի բարգավաճումը պրոլետարիատի դիկտատուրայի որոք։ Փաստական հավասարություն սահմանելու գործում ձեռք բերված խոշոր հաջողությունները։ «Մեզ մոտ»—բոլոր ազգությունների աշխատավորների յեղբայրական միություն՝ հանուն սոցիալիզմի հաղթանակի։ «Նրան մոտ»—ազգային գաղութային նճշման աճում գաղութներում, ազգային պայքար Յեվրոպայում։

Համ. Կ. (բ) Կ. և ազգային կոմկուսակցությունների ազգային քաղաքականության միջազգային նշանակությունը։ Հետամնաց ժողովուրդների վոչ-կապիտալիստական զարգացման փորձը ԽՍՀՄ-ում։ ԽՍՀՄ-ն օրինակ է ծառայում աշխարհի բոլոր ճնշված ժողովուրդների համար ազգային—գաղութային հարցի հեղափոխական լուծման ասպարեզում։ Համ Կ. (բ) Կ.-ի և Կոմինտերնի ծրագրի փորձը ազգային—գաղութային հարցի վերաբերյալ։



## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

### 1-ին թեմայի շուրջը

ԼԵՆԻՆ— Թեզեր ազգային հարցի շուրջը 16-րդ հատոր.[1])։

ՍՏԱԼԻՆ— Լենինիզմի հիմունքները, գլ. 1—2.

ԼԵՆԻՆ— Բանաձև ազգային հարցի առթիվ 17 հատ.

ԼԵՆԻՆ— Ազգային հարցը մեր ծրագրում 5 հատ.

ԼԵՆԻՆ— Ռ.Ս.Դ.Բ.Կ-ի ազգային հարցի մասին 17 հատ.

ՊԱԿՐՈՎՍԿԻ— Մարքսիզմը և Ռուսաստանի պատմական զարգացման առանձնահատկությունները։

Համ. Կ.(բ)Կ.-ի համագումարների և կոնֆերենցիաների բանաձևերը.— 1) ԲՈՒՆԴԻ այն մասին, թե ի՞նչ տեղ ունի «Բունդը» կուսակցության մեջ։ Ռ.Ս.Դ.Բ.Կ. 2-րդ համագումար. 2) 3-րդ, 4-րդ, և 5-րդ համագումարների բանաձևերը ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մասին. 3) Ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մասին. Կենտկոմի 1912 և 1913 թ. խորհրդակցություններում. 4) 1917 թ. ապրիլյան կոնֆերենցիայի բանաձևն ազգային հարցի մասին։ 5) 10 և 12 համագումարների բանաձևերն ազգային հարցի մասին։ Համ. Կ.(բ)Կ. 16-րդ համագումարի աղագրական հաշվետվությունը, ընկ. Ստալինի զեկուցումն ու յեզրափակիչ խոսքը, և կենտկոմի հաշվետվության առթիվ ընդունված բանաձևը (ազգային հարցի վերաբերյալ բաժինը(։

ԴՐԱԲԿԻՆԱ— Ազգային և գաղութային հարցերը ցարական Ռուսաստանում։

### 2-րդ թեմայի շուրջը

ԼԵՆԻՆ— Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին. 17 հ. գլ. 3.

ԼԵՆԻՆ— Սոցիալիստական հեղափոխությունն ու ազգերի ինքնորոշման իրավունքը. 19 հատ.

ՎԱՆԱԳ և ՏՈՄՍԻՆՍԿԻ—Ռուսաստանի տնտեսական զարգացումը, 2-րդ հատ.

ՍՏԱԼԻՆ— Մարքսիզմն ու ազգային հարցը։

ՄԵՆՐՋԱՆ—Ինքնակալության գաղութային քաղաքականությունը, «Революционный восток» ժուռնալի 1930 թ. № 8-ում տպված հոդվածը։

ՄԵՆՐՋՈՆ— Ազգային — ծայրամասային շարժումն Ռուսաստանում 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին. «ընթերցանության գիրք Ն.Ս.Հ.Մ. ժողովուրդների մասին» 3-րդ հատ.

1916 թ. ապստամբությունը Միջին Ասիայում «Պրոլետարական հեղափոխություն» ժուռնալի 1931 թ. № 8-ում յեղած թեզերը։

«Հեղափոխությունն ու ազգային հարցը» 3-րդ հատ.

ՊԱՊՈՎ—Ու.Կ. (բ)Կ. պատմության ակնարկ ներածություն 1—8-րդ գլ.։

---

[1] Թե այստեղ և թե մյուս տեղերում Լենինի հոդվածները ցույց են տրված 2-րդ և 3-րդ հրատարակություններից։

ՎՈԼԻՆ.— Ու. Կ. (բ)Կ պատմության համառոտ ակնարկ.—1-4րդ գլ.

ԱԳՈՒՐՍԿԻ— Հեղափոխական շարժումը Բելոռուսիայում:

ՄԱՅՁԵԼ և ՇԱՊՈՎԱԼԵՆԿՈ—Բ.Կ.(բ)Կ. պատմության համառոտ ուրվագիծ (Բելոռուսական լեզվով):

ՇՉԵՐԲԱԿՈՎ— Հոկտեմբերյան հեղափոխությունը Բելոռուսիայում և ռազմական-լեհական օկուպացիան (Բելոռուսական լեզվով):

ՄԱԽԱՐԱՁԵ— Անդրկովկասի հեղափոխական շարժման ակնարկ:

ՄԱԽԱՐԱՁԵ— Խորհուրդներն ու պայքար խորհրդային իշխանության համար Վրաստանում:

ՍԵՖ— Բաքվի Հոկտեմբերը. հոդված՝ տպված «Պրոլետարական հեղափոխության» ժուրնալի 1930 թ. № 11-ում:

ՌԱՏԳԱՈՒԶԵՐ— Պայքար խորհրդային Ադրբեջանի համար:

ԴՐԱԲԳԻՆԱ— Թուրքական պրոլետարիատը հեղափոխության և քաղաքացիական պատերազմի մեջ. հոդված՝ տպվ. «Խ.Ս.Հ.Մ.-ի պրոլետարիատի պատմությունը» ժուրնալի № 5 և 6-ում:

ԲՈԺԿՈ— Քաղաքացիական պատերազմը Միջին Ասիայում:

ՊԱԿՐՈՎՍԿԻ— Միջին Ասիան. հոդված «Գրանատ» հանրագիտական բառարանում. 41 հատ.— 6.

ՖԵՈԴՈՐՈՎ— Թուրքեստանի կոմկուսակցության պատմությունը. Հոդվ. «Коммунистическая мысль» ժուրնալի 1927 թ. 2-րդ համարում. Տաշքենդ (տես նույն ժուրնալի 3-րդ համարում տպված գրախոսականը):

ՑՎԻԲԱԿ— Դասակարգային պայքարը Միջին Ասիայում «Историк Марксист» ժուրն. № 11.

ԳԱԼՈՒԶՈ— Ազգային-ազատագրական շարժման պերիոդիզացիան Միջին-Ասիայում. մարքսիստ-պատմաբանների Համամիութենական 1-ին կոնֆերենցիայի աշխատանքը. հ. 1:

ԼԵՆԻՆ— Դենիկինի վրա տարած հաղթության առթիվ Ուկրայինայի բանվորներին ու գյուղացիներին գրած նամակը, 17 հ. 1-ին հրատ.

ԼԵՆԻՆ— Թուրքեստանի կոմունիստներին ուղղած նամակը. 20-րդ հատոր (լրացուցիչ, 1-ին հրատ.) 2-րդ մաս.

ՍՏԱԼԻՆ— Հոկտեմբերյան հեղաշրջումն ու ազգային հարցը:

ԴՐԱԲԿԻՆԱ— Ազգային և գաղութային հարցերը ցարական Ռուսաստանում:

ՊԱՊՈՎ Ն. Ն.— Խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը, 4, 5 և 6-րդ դասախոսություններ:

## 3-րդ թեմայի շուրջը

ԼԵՆԻՆ— Պարենհարկի մասին, 26-րդ հատ.:

ԼԵՆԻՆ— Հրահանգներ Կովկասի կոմունիստներին, 26-րդ հատ.;
10-րդ համագումարի հաշվետվության ապագրությունը: Զեկուցում և վճռաբանություններ ազգային հարցի վերաբերյալ:
12-րդ համագումարի սղագրական հաշվետվությունը. զեկուցում և վճռաբանություններ ազգային հարցի վերաբերյալ:

ՊԱՊՈՎ— Խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը, 7 և 8 դասախոսություններ:

ՍՏԱԼԻՆ— Լենինիզմի հարցերը. Кутв (Ա.Ա.Կ.Հ.-ի խնդիրների մասին).



ՊԱՊՈՎ—Ու.Կ. (բ)Կ. պատմության ուրվագծեր, 9 և 10 գլ.:

ՎՈԼԻՆ— Ու.Կ.(բ)Կ. պատմության համառոտ ուրվագիծը 5 գլ.

ՄԱՅՁԵԼ և ՇԱՊՈՎԱԼԵՆԿՈ— Բ.Կ. (բ)Կ. պատմության համառոտ ուրվագիծը:

ՎԱՌԵՑԿԻՍ և ԶԵԼԵՆՍԿԻ— Միջին Ասիայի ազգային-պետական սահմանագծումը:

ՆՈԴԵԼ— Հողա-ջրային ռեֆորման Խորհրդային Արեվելքում. հոդվ. «Հեղափոխությունն ու ազգությունները» ժուրն. № 1. 1930 թ.:

ԳՐԱՆԱՏԻ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ— 41-րդ հատ., հոդվածներ Ադրբեջանի, Հայաստանի, Բելոռուսիայի, Վրաստանի, Անդրկովկասյան ֆեդերացիայի, Միջին Ասիայի, Ուկրայինայի մասին:

## 4-րդ թեմայի շուրջը

ՍՏԱԼԻՆ— Լենինիզմի հարցերը:

Ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը, նյութեր:

Համ.Կ.(բ)Կ. 16-րդ համագումարը. Կենտկոմի հաշվետվության և ընկ. ՅԱԿՈՎԼԵՎԻ զեկուցման առթիվ ընդունված բանաձևեր:

ՍՏԱԼԻՆ— Կ.Կ. հաշվետվությունը 16-րդ համագումարում և յեզրափակիչ խոսքը:

ՆՈԴԵԼ— Կոլեկտիվացումն ազգային հանրապետություններում: Հոդվ. «Հեղափոխությունն ու ազգությունները» ժուրն. № 3. 1930 թ.:

ՌԻԲԱԿՈՎ— Հնգամյակն ու արդյունաբերական շինարարությունն ազգային հանրապետություններում. հոդվ. «Հեղափոխությունն ու ազգությունները» ժուրնալի № 2 և 3, 1930 թ.:

ԲՈԳԴԱՆՈՎ— Կոլտնտեսական շինարարության վճռական մեթոդներն ազգային շրջաններում. հոդված «Հեղափոխությունն ու ազգությունները» ժուրն № 7. 1930 թ.

ԿՈՒՐԲԱՆԲԱՅԵՎ—Կուլտուրական հեղափոխության խնդիրները խորհրդային Արեվելքում. հոդված «Հեղափոխությունն ու ազգությունները» ժուրն. № 1. 1930 թ.:

ԱԼԻՅԵՎ— Լատինացման հաղթանակը՝ լավագույն հիշատակն է ընկ. Աղամալի օղլու, հոդվ. «Հեղափոխութ. ու ազգութ. ժուրն. № 7 1930 թ.:

ԴԻՄԱՆՇՏԵՅՆ—Իդեոլոգիական պայքարն ազգային հարցում, հոդվ. «Հեղափոխությունն ու ազգությունները» ժուրն № 3 1930 թ.:

ՌԻՍԱԿՈՎ— Վելիկոռուսական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի պրակտիկան. հոդվ. «Հեղափոխությունն ու ազգությունները» ժուրն. № 8, 1930 թ.:

ԲՈԳԴԱՆՈՎ—Կոլտնտեսական շինարարությունն ազգային հանրապետություններում և մարզերում. հոդվ. «Հեղափոխությունն ու ազգությունները» ժուրն. № 1, 1931 թ.:

ՌԻՍԱԿՈՎ— Վնասարարությունն ազգային ռայոններում: Հոդվ. «Հեղափոխությունն ու ազգությունները» ժուրն. № 6, 7. 1931 թ.:

ԿՈԶԱՆ— Հնգամյա պլանի կատարումն ազգային հանրապետություններում, հոդվ. «Հեղափոխությունն ու ազգությունները» ժուրն. № 6. 1931 թ.:

*Համ.Կ.(բ)Կ. ազգային քաղաքականությունը թվերով: Կոմակադեմիայի հրատարակած ժողովածու:*

*Կուսակցության ազգային ճիշտ քաղաքականության համար. մեթոդական վերլուծություն, «Կոմունիստական Հեղափոխություն» ժուռնալի* № 4-*ում*, 1931 *թ.:*

ՊԱՊՈՎ— *Խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը.* 7, 8 *դասախոսությունները և «Կուսակցության ազգային քաղաքականությունը ռեկոնստրուկտիվ շրջանում» հավելվածը:*

ՎՈԼԻՆ— *Ու.Կ.(բ)Կ. պատմության համառոտ ուրվագիծը,* 5 *գլ.:*

ՄԱՑՁԵԼ և ՇԱՊՈՎԱԼԵՆԿՈ— *Բ.Կ.(բ)Կ. պատմության համառոտ ուրվագիծը:*

## 5-րդ թեմայի շուրջը

ՍՏԱԼԻՆ— *Լենինիզմի հարցերը: Կուսակցության յերեք հիմնական լոզունգների մասին գյուղացիական հարցի վերաբերյալ:*

ՏԱԲՈԼՈՎ— *Համ.Կ.(բ)Կ. ազգային քաղաքականության խնդիրների թեորետիկ մշակման շուրջ.* «Бюллетень заочной консультоции И.К.П.»-*ում յեղած թեզերը,* № 2, 1931 *թ.:*

ՍԵԳԻԶԲԱՅԵՎ— *Հոկտեմբերի բնույթի լենինյան հասկացողության համար Միջին Ասիայում, հոդված «Բոլշևիկ» ժուռնալի* № 14-*ում*, 1930 *թ.:*

ԳՈՐԻՆ— *Պրոլետարիատի դերը հեղափոխական շարժման մեջ Ուկրայինայում, հոդվ. «Բոլշևիկ» ժուռնալի* № 1. 1930 *թ.:*

ՊԱՊՈՎ— *Ու.Կ.(բ)Կ. պատմության ուրվագիծը: Ներածություն:*

ՎՈԼԻՆ— *Ու.Կ.(բ)Կ. պատմությունն համառոտ ուրվագծով.* 6-*րդ գլուխ:*

ՎՈԼԻՆ— *Եավորսկինա. հոդվ.* «На допомогу партиавчанию» *ժուռնալի* № 2 և 5, 1930 *թ. (Ուկրայնական լեզվով):*

ՖՐԻԴ— *Ու.Կ.(բ)Կ. արմատների հարցի շուրջը, հոդված «Ուկրայինայի բոլշևիկ» ժուռն.* № 10 և 14, 1927 *թ. (Ուկրայնական լեզվով):*

ՑՈՒԳՈՎ— *Պատմական ֆրոնտի դրությունն ու խնդիրները Բելոռուսիայում: հոդվ.* «Истоэик марксист» *ժուռն.* 17-*րդ հատ.:*

ԼԵՆԻՆ— *Թեզիսներ ազգային և գաղութային հարցի վերաբերյալ՝ Կոմինտերնի* 2-*րդ կոնգրեսում,* 15-*րդ հատ.:*

*ԿՈՄԻՆՏԵՐՆԻ* 6-*րդ կոնգրեսը. Թեզիսներ հեղափոխական շարժման մասին գաղութային և կիսագաղութային յերկրներում:*

## 6-րդ թեմայի շուրջը

ԼԵՆԻՆ— *Ազգային հարցը մեր ծրագրում.* 5-*րդ հատ.:*

ԼԵՆԻՆ— *Ռ.Ս.Դ.Բ.Կ. ազգային ծրագրի մասին,* 17-*րդ հատ.:*

ԼԵՆԻՆ— *Քննադատական դիտողություններ ազգային հարցի վերաբերյալ,* 17-*րդ հատ.:*

ԼԵՆԻՆ— *Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին,* 17-*րդ հատ.:*

ԼԵՆԻՆ— *Սոցիալիստական հեղափոխությունը և ազգերի ինքնորոշման իրավունքը.* 19-*րդ հատ.:*

ԼԵՆԻՆ— *Ինքնորոշման շուրջը յեղած բանավեճերի արդյունքները* 19-*րդ հատ.*



ՍՏԱԼԻՆ— *Մարքսիզմը և ազգային հարցը.* 1917 *թ. Ապրիլյան կոնֆերենցիայի արձանագրությունները. ընկ. Ստալինի զեկուցումն ազգային հարցի մասին և վիճաբանությունները:*

8-*րդ համագումարի սղագրական հաշվետվությունը. ընկ. ընկ. Լենինի և Բուխարինի զեկուցումներն ու վիճաբանությունները կուսակցության ազգային ծրագրի վերաբերյալ:* 10-*րդ համագումարի սղագրական հաշվետվությունը. ընկ. Ստալինի զեկուցումն ազգային հարցի վերաբերյալ և վիճաբանությունները:*

12-*րդ համագումարի սղագրական հաշվետվությունը:*

*Ընկ. Ստալինի զեկուցումն ու յեզրափակիչ խոսքը:*

ԼԵՆԻՆ— *Թեզիսներ ազգային և գաղութային հարցի վերաբերյալ Կոմինտերնի* 2-*րդ կոնգրեսում.* 25-*րդ հատ.:*

ՍՏԱԼԻՆ—*Լենինիզմի հիմունքները,* 6 *գլ.:*

ՍՏԱԼԻՆ— *Լենինիզմի հարցերը. Ազգային հարցի շուրջը Հարավ-Սլավիայում:*

*Համ.Կ.(բ)Կ. Ծրագիրը. ազգային հարցին վերաբերող բաժինը:*

*Կոմինտերնի ծրագիրը.—* 4-*րդ բաժին,* § 9.:

ԴԻՄԱՆՇՏԵՅՆ— *Լենինի աշխատանքների էտապներն ազգային հարցի վերաբերյալ, նախահոկտեմբերյան շրջանում. հոդված* «Революция и национальности» *ժուռնալի* № 6-*ում*, 1930 *թ.:*

ՊԱՊՈՎ Ն.— *Խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը:*

*Կուսակցության ազգային ճիշտ քաղաքականության համար. մեթոդական մշակում* «Коммунистическая революция» *ժուռնալի* 1931 *թ.* № 4-*ում:*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Եջ

Բացատրական նամակ . . . . . . . . . . . . . . . . . 3—8

Առաջին թեմա—Համ.Կ.(բ)Կ.Կ. ԽՍՀՄ.-ի բոլոր ժողովուրդների պրոլետարիատի կուսակցությունն է . . . . . . . . . . . . . . 8—9

Յերկրորդ թեմա—Պայքար Հոկտեմբերի համար և ազգային կոմկուսացությունների կազմակերպումը . . . . . . . . . . . . . . 9—13

Յերրորդ թեմա— Ազգային կոմկուսակցությունները ՆԷՊ-ի վերականգնման շրջանում . . . . . . . . . . . . . . . . . 13-14

Չորրորդ թեմա— Ազգային կոմկուսակցությունները ՆԷՊ-ի վերակառուցման շրջանում . . . . . . . . . . . . . . . . . 14-16

Հինգերորդ թեմա— Ինչպիսի թշնամիների հետ պայքարելով աճեցին ազգային կոմկուսակցությունները . . . . . . . . . . . . . 16—17

Վեցերորդ թեմա— Պայքար յերկու ֆրոնտի վրա բոլշևիկյան տեսության և քաղաքականության համար ազգային հարցում . . . . . . 17—19


---


ՊԵՏ ՀԱՆ ԳՐ-ԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм ССР
ИМ А МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0185733

ԳԻՆԸ 15 ԿՈՊ. ($1^1/_2$ մ.)

Отдел культуры и пропаганды ЦК ВКП (б)

ИСТОРИЯ НАЦКОМПАРТИЙ

Госиздат ССР Армении
Эривань—1931